

## **ՀԱՍԱՇԽԱՐՁԱՅԻՆ ԳՈՐԾԵՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆ՝ ԳՈՅԱՏԵՎՄԱՆ ՊԱՅՔԱՐ**

**Դավիթ Հովհաննեսիան**

Ներկայիս գլոբալիզացիոն գործընթացները, պայմանավորված արդի հաղորդակցական տեխնոլոգիաների զանգվածային ներդրմանը, էականորեն փոխել են «ժամանակ» և «տարածություն» ավանդական հասկացությունների ընթացումը: Քաղաքական առումով, այս գործընթացի արդասիքը՝ աշխարհակարգի միաբներ մոդելը, համարդելի է նինչնալորեալիզացիոն ժամանակաշրջանի ավտորիտար և անբողջատիրական համակարգերի հետ: Արժեքային համակարգերի՝ աքսիոլոգիական մոտեցման վրա հիմնված վերլուծությունը բույլ է տալիս նորովի մոտենալ «տարածաշրջան» հասկացության սահմաննանը, ինչպես նաև ուղվագծել այն բարդ ճանապարհը, որով եվրոպական երկրները անցան դեպի Եվրոպական Միություն: Հոդվածում վերլուծվում են նաև հակամարտությունների տարածաշրջաններում արժեքային համակարգերի մերձեցման հիմնախնդիրներ:

Պատմությունը, փոխելով իր դրսևորման ձևերը, իմաստային ուղղվածությունը, քաղաքակրթական կառույցները և համակարգերը, այդուհանդերձ, առանցքային գործընթացների արտահայտման տեսակետից միշտ կրկնվում է: Մարդկության զարգացման տարբեր փուլերում հասունացել են այնպիսի իրավիճակներ, որոնք տվյալ ժամանակաշրջանների հասարակություններին և պետական կամ քվաղաքական կառույցներին ստիպել են խոշորանալ: Սովորաբար դա կապված է եղել հաղորդակցման (փոխադրամիջոցներ, կապ) տեխնոլոգիաների զարգացման և ընդհանրապես՝ ինֆորմացիայի (լայն իմաստով) տարբեր տեսակների փոխանցման կատարելագործման և արագացման հետ:

Նախնյաց պաշտամունքը և նրանց անունից փոխանցվող ու պահպանվող բարոյական նորմեր և քաղաքակրթական դրույթներ պարունակող պատումները դարձան այն անհրաժեշտ հիմքը, որի վրա ձևավորվեց տոհմացելային համակարգը: Գրերի գյուտը, կառավարման մեթոդների ու կառույցների զարգացումը և առևտրատնտեսական հարաբերությունների համակարգի խոշորացումը, ինչպես նաև բեռներ փոխադրելու գործընթացը թերևացնող տարբեր հայտնագործությունները նախադրյալներ ստեղծեցին տոհմացելային համակարգի տիպաբանական փոփոխության համար, ինչը նախապատրաստեց վաղ միջնադարի պետությունների գոյացումը:

Բոլոր այս գյուտերն ու հայտնագործությունները ազդում են մարդու աշխարհներակալման, աշխարհայեցողության վրա, քանի որ փոփո-

խության էին Ենթարկում երկու կարևորագույն կատեգորիա՝ ժամանակը և տարածությունը: Ժամանակը ընդլայնվում էր, քանի որ նույն ժամանակահատվածում կարելի էր ավելի շատ գործողություններ կատարել, ավելի շատ ինֆորմացիա նշակել, պահպանել, օգտագործել, ավելի մեծ տարածություն կտրել-անցնել և այլն: Նույն այդ պատճառներով՝ տարածությունը սեղմվում էր, և դրա հետևանքով՝ մարդկանց ավելի ու ավելի մեծ խնբեր նտնում էին միմյանց հետ կենսական նշանակություն ունեցող շփումների և համա- կամ հակագործակցության մեջ: Ներգրավվելով նշված գործընթացների մեջ՝ այդ խնբերը ի վերջո միանում էին, որոշ, երբեմն՝ շատ երկար ժամանակ պահպանելով իրենց ինքնությունը և առանձին (բայց ոչ՝ անկախ) լինելու: Բայցևայնպես, անգա՞ն ապահովվելով այդ ինքնությունն ու առանձինությունը՝ նրանք ստիպված էին լինում Ենթարկվել իրենց միջից իրենց տիպին պատկանող, սակայն ավելի ուժեղ միավորին:

Այս ամենը վերաբերվում է ոչ միայն իին շրջանի պատմությանը, այլև՝ նոր և նորագույն ժամանակաշրջաններին: Գերմանիան ձևավորվեց մի քանի տասնյակ, իսկ մինչև 1815թ.՝ մի քանի հարյուր պետական և կիսապետական կառույցների իինան վրա: Դայտնի է ժամանակակից Ֆրանսիայի ձևավորման դժվարին պատմությունը: Մոռացվել են բազմաթիվ ցեղերի, տոհմերի, ժողովուրդների, էթնիկական այլ միավորների անվանումները, թեև պահպանվել են բարբառային տարբերությունները, յուրահատուկ սովորույթները, նիստուկացը և այլն: Սակայն, նրանք բոլորն էլ այսօր կոչվում են ֆրանսիացիներ կամ գերմանացիներ:

Բնականաբար, նման գործընթացները ավելի արագ տեղի են ունենում այն դեպքերում, երբ կա դրսից սպառնացող և ներսինից ավելի սպառնալից, ինքնության պահպանումը հարցականի տակ դնող լուրջ վտանգ, որը մեծացնում է ներքին դիմադրողականությունը:

Գլոբալիզացիոն գործընթացների քննարկումը փիլիսոփայական կատեգորիաների շրջանակներում հանգեցնում է այն եզրակացության, որ ժամանակի և տարածության ընկալման կտրուկ փոփոխությունը, որը բխում է նորագույն տեխնոլոգիաների լայնածավալ առօրեական կիրառումից, չի կարող որպես հետևանք չհանգեցնել քաղաքակրթական կառույցների, այդ թվում և հասարակության կառավարման համակարգի համապատասխան զարգացման:

Այս հարցը դնելով՝ մենք անմիջապես տեղափոխվում ենք քաղաքականության ոլորտ, քանի որ էական է այն եղանակը, որի տրամաբանությամբ պետք է կատարվի կառավարման համակարգի փոփոխությունը: Այլ կերպ ասած, հնագույն ժամանակներից այնպես է ստացվել, որ ու-

Ժեղը իրեն միացրել է մնացածներին, ինչը ժամանակակից տերմինաբանությամբ արտահայտվում է «միաբնառ աշխարհ» ձևակերպմամբ:

Համակարգերի համաշխարհայնացման (գլոբալիզացման) պայմաններում, մեր կարծիքով, տեղին է այս գործընթացի համեմատումը XIX-XX դդ. ընթացքում պետությունների ներսում կատարվող զարգացման ճանապարհի (ժողովրդավարական, ավտորիտար կամ ամբողջատիրական) ընտրության գործընթացի հետ: Այն դեպքերում, երբ հասարակությունը կարողանում էր ստեղծել այնպիսի համակարգ, որտեղ իշխանության հիմնական արժեքը բազմազան և բազմատիպ արժեքային համակարգերի երաշխավորված գոյության և համագործակցության ապահովումն էր<sup>1</sup>, ստեղծվում էր ժողովրդավարական պետություն: Հակառակ դեպքում, երբ որևէ սոցիալական շերտ, դաս կամ խումբ կարողանում էր իրեն ենթարկել մյուսներին՝ պարտադրելով իր արժեքները, ձևավորվում էր ավտորիտար կամ ամբողջատիրական<sup>2</sup> պետություն: Եթե Ամերիկայի Միացյալ Նահանգները, լինելով ամենահզոր պետությունը, պարտադրի ամերիկյան արժեքների գերակայությունը և մյուս բոլոր արժեքային համակարգերի ենթակայությունը, կստեղծվի նույն ամբողջատիրական համակարգը, սակայն արդեն համաշխարհային մակարդակով:

Միևնույն ժամանակ, եթե համաշխարհային հանրությունը կարողանա համախմբել իր ուժերը և, միասնական ջանք գործադրելով, պարտադրել Ամերիկայի Միացյալ Նահանգներին իրաժարվել դյուրին թվացող ճանապարհից և երաշխավորել բազմապիսի ու բազմատիպ արժեքների գոյությունն ու համագործակցությունը, ապա կստեղծվի գլոբալ կտրվածքով քաղաքացիական հասարակություն հիմնելու անհայտեա հնարավորություն:

Ա. Թոյնբին, վերլուծելով այն դեպքը, երբ մի քաղաքակիրք հասարակություն վտանգված է մյուս քաղաքակիրք հասարակության կողմից, նկատում է, որ «կա մարտահրավերին պատասխան տալու երկու այլընտրանքային տարրերակ»: ... Ներկայիս պայմաններում հարմար և ամբողջովին հիմնավորված է կիրառել որոշակի հասկացություններ, որոնք ի հայտ են եկել նման իրավիճակում՝ Շունաստանի և Սիրիայի հին քաղաքակրթությունների բախման ժամանակ: Քրիստոսի ծննդից մեկ դար առաջ և Քրիստոսի ծննդից մեկ դար հետո ընդգրկող ժամանակաշրջանում, իրեաները (և կարելի է ավելացնել՝ իրանցիներն ու

<sup>1</sup> Քաղաքացիական հասարակության այս ձևակերպումը տրվել է 2003թ. օգոստոսին Սևանում կայացած «Քաղաքացիական հասարակության զարգացման հեռանկարները Կովկասում» ստեղծագործական խաղի քննարկումների արդյունքում:

<sup>2</sup> Դա կախված է մարդու իրավունքների օտարման չափից:

եգիպտացիները), Յելլենիզմի ազդեցության տակ, բաժանվեցին երկու կուսակցության: Պաղեստինում դրանցից մեկը կոչվում էր «զելոտներ», մյուսը՝ «հերովդեսցիներ»: Ա. Թոյնբին այսպես է նկարագրում այդ երկու կուսակցությունները. «Զելոտը այն մարդն է, որը հայտնի մեջ անհայտից փրկություն է որոնում, ու եթե նա կոչում է իրեն մարտավարությամբ գերազանցող և հզոր նորածն գենք ունեցող հակառակորդի հետ, ապա պատասխանում է նրանով, որ հատուկ ջանասիրությամբ ու ճշգրտությամբ է կիրառում իր ավանդական ռազմական արվեստը... Յերովդեսցին այն մարդն է, որը գործում է մի սկզբունքով. անհայտից պահպանվելու ամենաարդյունավետ ճանապարհը՝ նրա գաղտնիքին տիրանալն է, ու երբ «հերովդեսցին», կանգնելով իրենից փորձված և լավ զինված հակառակորդի դիմաց, դժվար վիճակի մեջ է ընկնում, ապա պատասխանում է մարտահրավերին նրանով, որ հրաժարվում է իր ավանդական ռազմական արվեստից և սովորում է կովել թշնամու հետ նրա իսկ գենքով և նրա մարտավարությանը տիրապետելով» [1]:

Յնարավոր է նաև, որ մարդկությունը այս անգամ ընտրի մի նոր, իր ներկա զարգացման աստիճանին ավելի համապատասխանող տարրերակ, որի ձևի, խնդիրների և նպատակների վերաբերյալ դժվար է կանխատեսումներ անել՝ հաշվի չառնելով այն փոխադարձ ազդեցությունները, որոնց արդյունքում վերակառուցվում են դաշնակից պետությունների միությունների, առանձին երկրների, կառավարությունների, կազմակերպությունների, խմբավորումների, առանձին անձանց նախնական գաղափարները, խնդիրները և նպատակները:

Հասկանալի է նաև, որ տեղի ունեցող գլոբալ տեղաշարժերը որոշակի, սակայն էական փոփոխությունների են ենթարկում նաև մի շարք քաղաքակրթական կառույցներ. ձևափոխվում են պետությունները, վերահիմաստավորվում է նրանց դերը համաշխարհային քաղաքական, տնտեսական և հումանիտար համակարգերում, շատ ավելի մեծ և լուրջ տեղ են ստանում տարբեր տիպի (քաղաքական, գաղափարական, կրոնական, տնտեսական, իրավական, իրավապաշտպան, էկոլոգիական և այլն) ոչ պետական կազմակերպությունները: Ի վերջո, սկսում է ձևափոխվել նաև համաշխարհային կառույցների հաստատված համակարգը:

Նկարագրված գործընթացների կարևորությունը պայմանավորված է նրանով, որ դրանց նոր ուղղվածությունը և իմաստային լիցքերի փոխազդեցությունը ազդում են նաև մի շարք ավանդական հասկացությունների ընկալման և գնահատման վրա: Այս տեսակետից՝ հատկանշական է «տարածաշրջան» հասկացության իմաստափոխությունը:

Պատմության ընթացքում, «տարածաշրջան» հասկացությունը,

լուրջ փոփոխություններ կրելով, այնուամենայնիվ, պահպանել է իր ավանդական իմաստը: Ոեգիոն (լատիներեն՝ *regio*, սեռական հոլով՝ *regionis*) բառացիորեն նշանակում է «մարզ»: Բառարաններում տրվում է հետևյալ բացատրությունը. տարածք կամ ակվատորիա, երբեմն իր ծավալով բավականին մեծ, որն անպայմանորեն հանդիսանում է որևէ տարածքային բաժանման համակարգում տաքսոնոմիկ միավոր:

Չին ժամանակների պատկերացումները աշխարհի վերաբերյալ այնպիսին էին, որ Յօռնի կայսրությունը պատկերացում չուներ հզոր չինական պետության կամ ամերիկյան և ավստրալիական մայրցանաքների մասին: Բնական է, որ հոռմեական տեսակետից տարածաշրջաններ էին հանդիսանում այն աշխարհագրական միավորները, որոնք արդեն մ.թ. IV դարում ընկալվում էին որպես Ենթատարածաշրջաններ:

Նավագնացության զարգացումը և նոր ցանաքային ճանապարհների իրացումը մեծապես ազդեց «տարածաշրջան» հասկացության զարգացման վրա: Պարզունակեցնելով՝ կարելի է ասել, որ փոխադրամիջոցների զարգացումը բերում էր տարածաշրջանների խոշորացման: Վերջապես, XVII-XVIII դդ. ձևավորվեց «տարածաշրջան» հասկացության այն իմաստը, որը որոշ փոփոխություններով օգտագործվում է նաև այսօր:

Վերը բերված ձևակերպումը ոչինչ չի տալիս տարածաշրջանի էական բնորոշիչների տեսակետից: Սակայն տնտեսական, քաղաքական, քաղաքագիտական և այլ տիպի գրականության մեջ «տարածաշրջան» հասկացությունը ստացել է կայուն իմաստ, հատկապես երբ նշվում է աշխարհագրական սահմանը՝ Յարավարելյան Ասիա, Արևմտյան Եվրոպա և այլն: Յասկացության նման սահմաննան դեպքում հատկանշական է դառնում տարածաշրջանային մշակութային և լեզվական ընդհանրությունների, քաղաքական և տնտեսական կապերի, ընդհանուր Ենթակառուցվածքների առկայության առաջնահերթությունը:

Արդեն իսկ հիշատակված սևանյան ստեղծագործական խաղի ընթացքում մշակվեց «տարածաշրջան» հասկացության վերաբերյալ մի նոր մոտեցում, որը կարող է չափազանց արդյունավետ դեր խաղալ վերլուծությունների ընթացքում:

Գլոբալ աշխարհում, որտեղ տարածությունն այլև էական դեր չի խաղում կապերի զարգացման համար, որտեղ կան բազմաթիվ համաշխարհային Ենթակառուցվածքներ (Ինտերնետ, բանկային համակարգ, արբանյակային հեռուստատեսություն, անդրազգային ընկերություններ և այլն), որտեղ միգրացիոն գործընթացների արդյունքում էրոսուները և կրոնական համայնքները աստիճանաբար սփռվում են իրենց կենսատարածքներից դուրս՝ ստեղծելով յուրատեսակ համաշխարհա-

յին համակարգեր (օրինակ՝ չինացիները, հրեաները, լեհերը, հայերը, քրիստոնյաները, մուսուլմանները, ինդուսները և այլն), ձևակերպվում է «տարածաշրջանի» մեկ այլ՝ «վիրտուալ» իմաստ, որը, չներժելով ավանդականը, թույլ է տալիս նոր բովանդակություն լցնել նրա մեջ: Որպես հիմք ընդունվում է «բազային (կամ՝ հիմնական) արժեք» հասկացությունը: Օրինակ՝ Եթե բազային արժեքը ժողովրդավարությունն է իր «Ազատություն, հավասարություն, եղբայրություն» ֆրանսիական կաղապարով, ապա աշխարհի աշխարհագրական քարտեզի վրա այդ արժեքի տարածման գոտիների ընդհանրական պատկերը տալիս է մի նոր տարածաշրջանի մասին ամբողջական պատկերացում: Եթե որպես բազային արժեք ընդունվում է, օրինակ՝ կոնյակը, ապա դրա մշակութային դրսուրումն է «սերը կոնյակի նկատմամբ», «կոնյակ խմելը» և այլն, իսկ քաղաքակրթական կառույցները, որոնք ապահովում են դրանք՝ կոնյակի արտադրության համար հումք աճեցնող խաղողի այգիները, տակառներ պատրաստող արհեստանոցները, կոնյակի գործարանները, ռեստորանները և այլն: Այդ ամենի տարածման գոտիները նշելով քարտեզի վրա՝ ստանում ենք «կոնյակի տարածաշրջան»: Բազային արժեքները կարող են լինել ամենատարեր բնույթի և տիպի:

Այս նոր մոտեցումը թույլ է տալիս նորովի վերլուծել այն իրավիճակը, որի մեջ պետք է գործի ժամանակակից կամ գուցե վաղվա հայ քաղաքական միտքը, կառուցվեն ՀՀ արտաքին քաղաքականությունն ու դիվանագիտությունը:

\* \* \*

Երկու արյունահեղ և կործանարար պատերազմների բովով անցած Արևանյան Եվրոպան միայն ուժերի ծայրահեղ լարման շնորհիվ կարողացավ կայուն խաղաղություն հաստատել: Այն վերականգնեց իր տնտեսությունը և արմատականացրեց ժամանակակից ժողովրդավարական ստանդարտները: Ենթարկվելով ժամանակի պահանջների հրամայականին՝ Արևանյան Եվրոպայի վեց երկրներ կարողացան, հաղթահարելով բոլոր օբյեկտիվ և սուբյեկտիվ խոչընդոտները, ընդունել մի որոշում, որի շնորհիվ այս աշխարհամասը փրկվեց նոր փորձություններից:

Խոսքը «Շումանի ծրագրի» մասին է: Ծրագիրը այդպես է կոչվել 1948-1953թթ. Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ռոբեր Շումանի անունով: Ծրագրի հիմնական հեղինակը և շարժիչ ուժը ժամ Մոնեն էր, որը մի պարզ թվացող գաղափար ձևակերպեց. Եթե երկու համաշխարհային պատերազմների պատճառը Գերմանիայի ռազմականացման հետևանքով Եվրոպայում ուժերի հավասարակշռության

խախտումն էր. Եթե Գերմանիայի ռազմականացման հիմքը այդ Երկրին պատկանող Երկարահանքի և քարածիսի պաշարներն են, և Եթե ֆրանսիական տնտեսության դինամիկ զարգացման ապահովման համար ամփոփելու հենց այդ պաշարների շուրջն է ծավալվում գերմանաֆրանսիական հակամարտությունը, ապա պետք է այնպես անել, որ Գերմանիան հերթական անգամ զգայթակղվի իր արդյունաբերության ռազմականացման հնարավորությամբ, իսկ Ֆրանսիայի, Բենիլյուքսի և Լիտվայի տնտեսություններն այդ պաշարներից ազատ օգտվելու հնարավորություն ստանան՝ փոխարենը Գերմանիային տրամադրելով նույնական հնարավորություն:

Ակնհայտ էր, որ Արևմտյան Գերմանիայի վրա ճնշում գործադրելով հնարավոր չէր ստիպել իրեն իրավամբ պատկանող բնական հարստությունից հրաժարվել (ի վերջո, Վերսալի խաղաղության պայմանագրի հիմնական թերությունն այն էր, որ այդ նրա պայմանները ոտնահարում էին գերմանացիների ազգային արժանապատվությունը, ինչն էլ, փաստորեն, դարձավ գերմանական ռևանշիզմի ծագման և արդյունաբերության ռազմականացման պատճառը): Յետևաբար, հարկավոր էր խնդրի լուծման այլ եղանակ գտնել:

Գտնված լուծումը պարզ էր և չափազանց գործնական. Արևմտյան Եվրոպայում տեղի ունեցող գործընթացների մեջ ներգրավված և ենթակառուցվածքային առումով սերտ կապեր ունեցող բոլոր պետությունները պետք է կամավոր կերպով հրաժարվեին իրենց պետական ինքնիշխանության այն մասից, որը կապված էր Երկարահանքի և քարածիսի պաշարների, Երկարի, պողպատի ու այլ մետաղների արտադրության և առևտի ոլորտների կառավարման ու տնօրինման հետ:

Դարձ է նշել, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո աշխարհի բաժանվելը Երկու հակամարտող գաղափարական և ռազմաքաղաքական ճամբարների՝ հանգեցրեց նրան, որ արևմտաեվրոպական Երկրների ժողովուրդները խորապես գիտակցեցին իրենց ընդհանրությունը, պատկանելությունը միևնույն մշակույթին, որի արժեքային հիմքերը վկանգնված էին: Այս նոր ընկալումները կարևորագույն դրդապատճառներ դարձան այդ պետությունների կազմակերպական միավորման համար: Ստեղծվեցին ենթակառուցվածքներ, որոնք իրար հետ կապեցին ոչ միայն Երկրները, այլ նաև՝ առանձին նահանգներ և քաղաքներ: Այդ ամենը հնարավորություն տվեց կառուցել իրական սոցիալ-տնտեսական հիմք՝ մշակութային-քաղաքական հրամայականների իրականացմանն ուղղված ծրագրերի կատարման համար:

Կարելի է վստահաբար արձանագրել, որ 1950-ականների սկզբին, Երբ ստեղծվում էր «Շումանի ծրագիրը», նրա հիմքում, որպես բազային, ընկած էր Եվրոպական ինքնության գոյատևման արժեքը: Այս

կարևոր դրույթը հիմնավորվում է Միացյալ Եվրոպայի ակունքների մոտ կանգնած գործիչների՝ այդ ժամանակաշրջանում արտահայտած կարծիքներով և տեսակետներով:

Օրինակ, դեռ 1948թ., արդեն հիշատակված ժ. Սոնեն Ռ. Շումանին հասցեագրված նամակում գրում էր. «Ես մտահոգված եմ նրանով, թե ի՞նչ տիպի հարաբերություններ կարող են հաստատվել հզոր դիմանիկ տերության (Ամերիկայի Միացյալ Նահանգների, - Դ. Յ.) ու Եվրոպայի երկրների միջև, եթե դրանք պահպանեն իրենց ներկայիս ձևն ու մտայնությունը: Իմ տեսակետից, անհնար է, որ Եվրոպան երկարատև առումով «կախված» մնա Միացյալ Նահանգներից. տնտեսապես՝ գրեթե բացարձակապես նրանց վարկերից, անվտանգության առումով՝ նրանց ռազմական ուժից: Եթե այդ իրավիճակը պահպանվի, ապա այս-տեղ՝ Եվրոպայում, վատ հետևանքները չեն հապաղի երևան գալ: Իմ բոլոր մտորումներն ու դիտարկումները հանգեցնում են ինձ մի եզրակացության, որը դարձել է իմ խորին համոզմունքը. որպեսզի Արևմտյան Եվրոպայի երկրների գործողությունները հանգեցնում լինեն ներկա հանգամանքներին և մեզ սպառնացող վտանգին, ինչպես նաև ամերիկյան ջանքերին, դրանք պետք է դառնան Արևմտյան դաշնության միացյալ գործողությունները: Վերջինիս ստեղծումը հաջողության պարտադիր պայմանն է» [2]:

Հատկանշական է, որ «Շումանի ծրագրի» հրապարակումից հետո, երբ ֆրանսիական կառավարությունը առաջարկեց Մեծ Բրիտանիային միանալ դրան, լեյբորիստական կուսակցության գործադիր կոմիտեն, որի անդամներն էին կառավարության յոթ ամենաազդեցիկ նախարարները, «Եվրոպական միասնություն» (European Union) վերնագրով մի փաստաթուղթ ընդունեց, որի մեջ ասվում էր. «Մենք չենք ընդունում վերազգային իշխանության որևէ ձև: Իրականում, ազատորեն կնքված պայմանագրերի իրականացման համար, մեզ հարկավոր է վստահելի միջազգային համակարգ... և լեզվով, և արմատներով, և սովորություններով, և դիրքորոշումներով, և քաղաքական հայեցակարգերով, և շահերով մենք ավելի մոտ ենք Ավստրալիային և Նոր Զելանդիային, քան Եվրոպային»:

Այսպիսով, Մեծ Բրիտանիան իրաժարվեց մասնակցել Եվրոպական ինտեգրման ամենահավակնութ ծրագրի իրականացմանը: Փաստաթղթի շարադրանքը, փաստորեն, պարունակում է Մեծ Բրիտանիայի կողմից առաջարկը մերժելու իիմնական պատճառը՝ արժեքային համակարգերի սկզբունքային տարբերությունը: Այստեղից՝ բրիտանական արժեքային համակարգը բնականորեն ձևավորում է «տարածաշրջան» հասկացության իր յուրահատուկ ընբանումը, որը բացարձակապես աշխարհագրական չէ: Յետագայում, արդեն Ընդհանուր շուկայի գոյու-

թյան պայմաններում, երբ փորձ կատարվեց կարգավորելու առևտրատնտեսական հարաբերությունները ԱՄՆ-ի հետ (1962թ.), Մեծ Բրիտանիայի մասնակցության խնդիրը նորից արդիական դարձավ:

Ընդհանուր շուկայի կողմից 1962թ. հունիսի 26-ին արված հայտարարությանը («Անհրաժեշտ է, որպեսզի Միացյալ Նահանգների և Միացյալ Եվրոպայի՝ երկու ինքնուրույն, սակայն հավասարաչափ հզոր կառույցների, որոնցից յուրաքանչյուրը կը կրի համաշխարհային իրավիճակի ընդհանուր պատասխանատվության իր բաժինը, միջև համագործակցությունը աստիճանաբար ընդունի գործընկերային հարաբերությունների ձև») ԱՄՆ նախագահ Ջ. Քենեդին պատասխանեց իր հայտնի Partnership («Համագործակցություն») անունն ստացած ճառով:

Նախագահ Քենեդին իր ելույթում առաջարկում էր ստեղծել «հավասար գործընկերների ասոցիացիա Եվրոպայում ձևավորվող նոր միության և երկու հարյուրամյակ առաջ Ֆիլադելֆիայում ստեղծված իին ամերիկյան միության միջև»:<sup>3</sup> Ողջունելով Եվրոպական միասնության ձևավորմանն ուղղված նախաձեռնությունը՝ նա հայտարարեց. «Ուժեղ և միավորված Եվրոպան մեզ համար ոչ թե մրցակից է, այլ՝ գործընկեր: Նրա առաջընթացին նպաստելը մեր արտաքին քաղաքականության հիմնական նպատակն է եղել վերջին 17 տարիների ընթացքում... Ես համոզված եմ, որ Եվրոպան կարող է կարևոր դեր կատարել համատեղ պաշտպանության գործում, ավելի առատաձեռն օգնություն տրամադրել կարիքավոր երկրներին, Միացյալ Նահանգների և մյուս երկրների հետ միասին իջեցնել մաքսային պատճեշները, լուծել տարադրամի և հումքի հիմնախնդիրները, վարել համաձայնեցված քաղաքականություն դիվանագիտական, տնտեսական և քաղաքական ոլորտներում: Ի դեմս այդպիսի Եվրոպայի մենք տեսնում ենք գործընկերոց, որի հետ մենք կարող ենք լիակատար հավասարության պայմաններում բանակցություններ վարել այնպիսի հսկայական խնդրի լուծման վերաբերյալ, ինչպիսին ազատ ժողովուրդների ընտանիքի հավաքական պաշտպանությունն է»:

Սակայն նախագահ Քենեդին Ամերիկայի աջակցության համար կարևոր նախապայման առաջադրեց. «Երբ կը նդունվի որոշում Ընդհանուր շուկայի մեջ Մեծ Բրիտանիայի մուտք գործելու վերաբերյալ, մենք կկարողանանք ավելի արագ տեմպերով առաջ շարժվել»:

Չխուսափելով կրկնությունից՝ հարկ ենք համարում նորից նշել, որ արդեն վաղուց Եվրոպամիության անդամ դարձած Մեծ Բրիտանիայի և

<sup>3</sup> Յարկ է ընդգծել, որ ԱՄՆ նախագահը շեշտում է իր այն տեսակետը, որ Եվրոպացիները նոր են սկսում քայլել այն ճանապարհով, որն ամերիկացիներն արդեն անցել են:

մայրցանաքային Եվրոպայի այսօր էլ բարդ մնացող հարաբերությունները բխում են արժեքների տարբերությունից և անգա՞ն համընկնող արժեքները տարբեր ձևով ինաստավորելուց:

\* \* \*

1950-ականներից Եվրոպական առաջատար երկրների քաղաքական վերնախավի ծավալած գործունեությունը Եվրոպական միասնականության կերտման ուղղությամբ՝ վերջին տասը տարիների ընթացքում հսկայական հաջողությունների է հասել:

Եվրամիության ընդլայնումը, Եվրոյի՝ որպես համաեվրոպական դրամական միավորի, շրջանառության մեջ մտնելը, Եվրոպական անվտանգության համակարգի ստեղծման փորձերը Միացյալ Եվրոպան վերածում են ինքնուրույն ուժային քննությունը, որի հիմնական ներուժն է ոչ միայն հզոր և դիմանիկ զարգացող տնտեսական համակարգը, այլև՝ այն ժողովրդավարական արժեքները, որոնք, տարբերվելով ամերիկյան արժեքային համակարգից, կարող են վերջինիս համար լուրջ նրանկից լինել:

Դարձ է նշել, որ դեռ 1991թ. Եվրամիության երկրների կողմից ընդունվել էր միացյալ Եվրոպական պաշտպանական համակարգի ստեղծման մասին որոշումը: Այդ որոշման իրականացումը տարբեր պատճառներով հետաձգվում էր: Սակայն իրաքի շուրջ տեղի ունեցող իրադարձությունները և անգլո-ամերիկյան կողմացիայի որոշումը՝ առանց ՄԱԿ-ի սանկցիաների պատերազմ սկսելու մասին, ստիպեցին Եվրամիությանը շատ կտրուկ և արագ արձագանք տալ: Որոշում ընդունվեց 2003թ. վարչուն հազարանոց Եվրոպական կորպուսի ստեղծման վերաբերյալ: Միաժամանակ ստորագրվեց գենքի գնումների գործակալության ստեղծման իրամանագիրը, այսինքն՝ արդեն սկսեց աշխատել այն կառույցը, որը պետք է կազմակերպի պաշտպանական համակարգը: Եթե Եվրոպական հզոր տնտեսությանն ու ստեղծվող անկախ ռազմական ներուժին ավելացնենք նաև միասնական արտաքին քաղաքականությունը, որն, ի դեպ, Ենթադրվում է Եվրոպական Սահմանադրությամբ, ապա ակնհայտ է դառնում, որ մոտ ապագայում, դաշտը կհամալրվի նոր, ուժեղ (գուցե նույնիսկ համարժեք) խաղացողով: Այս խաղացողը՝ Միացյալ Եվրոպան, «սառը պատերազմի» ավարտից հետո նորովի է գնահատում իր արժեքային համակարգի սկզբունքային տարբերությունները մյուսներից, և ջանք ու միջոց չի խնայում իր ընդհանրական ինքնության ապահովման համար, գիտակցելով, որ «Արևմուտք» հասկացությունը այլև արդիական չէ որպես մշակութային-քաղաքակրթական բնորոշիչ:

\* \* \*

ԽՍՀՄ քայլայումից հետո, այս կայսրության իրավահաջորդ Ռուսաստանի Դաշնությունը հայտնվել է իր ինքնության գիտակցման և պահպանման ծանրագույն խնդրի առջև։ Ռուսաստանի մտավորական վերնախավը ձգտում է գտնել այն հիմնարար արժեքները, որոնք կարող են հասարակությունն ու պետությունը հանել ստեղծված ճգնաժամից։ Այս ճանապարհին տեղ գտած որոնումները ընդգրկում են ռուս հասարակության համար ընկալելի բոլոր տարրերակները՝ նեղազգայնանոլությունից (նացիոնալ-շովինիզմ) մինչև արմատական (ռադիկալ) ազատականություն։ Սակայն, հիմնական խնդրի լուծումը թելադրում է նաև արժեքի ընտրությունը։ Քանի որ խնդիրը իր հիմնական հենակետերով քաղաքակրթական է, ապա արժեքն էլ ոչ թե ռուսական ազգայինի ինքնությունն (Матушка-Русь) է, այլ՝ ռուսաստանյան, ինա՞ Եվրասիական կայսրությունը (Российская Держава):

Քաղաքականության հարթության մեջ այս կողմնորոշումը երևակվեց վերջին երկու-երեք տարիների ընթացքում, իսկ ավելի ակնհայտ դարձավ ԱՄՆ-ի Իրաք ներխուժելու շուրջ ծագած բանավեճերի և դրանց հետևած իրադարձությունների ենթատեքստում։ Ռուսաստանը, ինչպես այդ բանավեճերի ընթացքում, այնպես էլ ամբողջ պատերազմի ժամանակ, ցույց տալով համաշխարհային հանրությանը Միացյալ Նահանգներին հետևողականորեն հակադրվելու իր պատրաստակամությունը, իրականում չհետևեց Եվրոպական առաջատարների օրինակին և չայրեց կամուրջները։ Նա պահն օգտագործեց, որպեսզի 2003թ. գարնանը ձևափոխի ԱՊՀ երկրների Յավաքական անվտանգության պայմանագիրը Յավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության, որին անդամակցեց ԱՊՀ կազմի մեջ մտնող Վեց երկիր։ Ռուսական զանգվածային լրատվամիջոցներն այն անմիջապես անվանեցին «Վարչավյան պայմանագիր-2»։

Այսպիսով, կարելի է ենթադրել, որ ձևափոխում են երեք ոչ քաղաքական, այլ՝ արժեքային համակարգերի սկզբունքային տարրերությունների վրա հիմնված և աշխարհաքաղաքական ուղղվածություն ունեցող բլոկներ, որոնք Զ. Բժեզինսկու անվանած «Մեծ շախմատային տախտակի» վրա ամրապնդվելու և ազդեցության ուժեղացմանն ուղղված պայքարի մեջ են մտնում։ «Այդ հսկայական և զարմանալի սահմաններ ունեցող Եվրասիական շախմատային տախտակի վրա, որը ձգվում է Լիսարոնից Վլադիկովստոկ, տեղադրված են խաղաքարերը։ Եթե միջնամասը հնարավոր լինի ներգրավել Արևիկան, եթե հարավային տարածաշրջանում որևէ մեկ խաղաղողի ներկայությունը չգերիշխի և եթե

Արևելքը չմիավորվի այնպես, որ ստիպի Ամերիկային լքել իր անդրծովային խարիսխները, ապա կարելի է ասել, որ Ամերիկան հաղթանակ կտանի: Սակայն եթե միջնամասը հետ մոլոր Արևմուտքին, վերածվի ակտիվ միասնական խաղացողի և կամ հսկողության տակ վերցնի Հարավը, կամ էլ որևէ խոշոր արևելյան տերության հետ ձևավորի միություն, ապա ամերիկյան գերիշխանությունը Եվրասիայում լրջորեն կսահմանափակվի: Նույնը տեղի կունենա, եթե որևէ կերպ հնարավոր լինի երկու խոշոր արևելյան խաղացողների միավորումը: Վերջապես, եթե արևմտյան գործընկերները քշեն Ամերիկային արևմտյան հեռավոր իր թուխսից, ապա դա ինքնըստինքյան կնշանակի Եվրասիական շախմատյին խաղատախտակի վրա ծավալվող խաղում Ամերիկայի մասնակցության ավարտը, նույնիսկ եթե դա, ամենայն հավանականությամբ, ի վերջո նշանակի նաև արևմտյան ծայրամասի ենթարկումը միջնամասը զբաղեցնող վերակենդանացած խաղացողին» [3]:

Աերը բերված հատվածում նշվում են Եվրասիայի միջնամաս ԱՄՆ-ի ազդեցության ներթափականցման երեք հնարավոր տարրերակները կամ ճանապարհները: Դրանցից մեկը անցնում է նաև Հարավային Կովկասի վրայով: Այդ առումով հետաքրքրություն է առաջացնում այսօր Մերձավոր Արևելքում առկա որոշ գործընթացների ուսումնասիրումը, քանի որ, ամենայն հավանականությամբ, գլոբալիզացիոն գործընթացները ի վերջո պետք է հանգեն «Մեծ Մերձավոր Արևելք» ծրագրի իրականացմանը, որն իր մեջ ընդգրկում է Մերձավոր և Սիջին Արևելքը, Կասպից ծովի ավագանի երկրները, Աֆղանստանը և Կովկասը: Աշխարհաքաղաքական տարածության միատարրությունը, բացի ներդրումների և ապրանքների մուտքը խոչընդոտող գործոնները վերացնելուց, հարկերը և սակագները ստանդարտավորելուց, ընդհանուր ժողովրդավարական սկզբունքներն ու նորմերը տարածելուց և այլն, ենթադրում է նաև գլոբալ ենթակառուցվածքների ստեղծում, ինչը թույլ է տալիս տարածքային առումով գործել շատ ավելի լայն շրջանակներում:

\* \* \*

«Սառը պատերազմի» ավարտից որոշ ժամանակ անց, ԱՄՆ մի շարք քաղաքական գործիչներ և վերլուծաբաններ սկսեցին քննադատել նախագահ Քլինթոնի աշխատակազմի գործունեությունը՝ անհանգստությամբ նշելով հստակ արտահայտված և հիմնավորված ամերիկյան արտաքին քաղաքական հայեցակարգի բացակայության փաստը:

Ակնհայտ է, որ ամերիկյան հասարակության կողմից արդի աշխարհի իրողությունների հանրեալ վերաբերմունքի փոփոխությունը պայմա-

նավորված է սեպտեմբերի 11-ի իրադարձություններով, ինչի հետևանքով սկսվեց արժեքային համակարգի վերագնահատման լրջագույն գործընթաց, և, մասնավորապես, իրաժեշտ տրվեց ԱՄՆ-ի և մնացած աշխարհի հարաբերությունները բնորոշող մեկուսիական նոտեցման վերջին մնացորդներին<sup>4</sup>:

Մյուս կողմից, շահիդների գործողությունների հետևանքով ամերիկացի մտավորականների շրջանակներում մի շարք հարցեր ծագեցին՝ իրենց կողմից քարոզվող արժեքների ունիվերսալ լինելու վերաբերյալ։ Այսպիսով, կասկածի տակ դրվեցին երկու՝ մինչ այժմ գլխավոր սկզբունքները՝ ունիվերսալիզմը և կղոլացիոնիզմը, որոնք որոշում էին ամերիկյան հասարակության մոտեցումը Միացյալ Նահանգներ - «մնացած աշխարհ» հարաբերությունների համակարգին։ Այս գործընթացների պատճառ հանդիսացող սեպտեմբերի 11-ի ողբերգությունը, բնականաբար, չէր կարող չանդրադաշնալ Միացյալ Նահանգների ինչպես ներքին իրավիճակի, այնպես էլ արտաքին քաղաքականության վրա։ Ամերիկացի հետազոտողներից ոմանք նշում են, որ միջազգային ահաբեկչությանը հայտարարված պատերազմը, ինչպես ժամանակին «սառը պատերազմ», ապահովեց Միացյալ Նահանգներին անհրաժեշտ գործնական և գաղափարական ուղեցույցներով, որոնցից ԱՄՆ-ը զրկվել էր Բեռլինի պատը քանդելուց հետո։

Զ. Բուշ-կրտսերի աշխատակազմի գործողությունները և նրա որոշ ներկայացուցիչների հայտարարությունները թույլ են տալիս ենթադրել, որ Սպիտակ տաճ արտաքին քաղաքական ուղղության նպատակն է վերը հիշատակված աշխարհաքաղաքական տարածության միատարրության ստեղծումը, ինչն ինքնին կապահովի ԱՄՆ դիրքերը՝ որպես միակ գերտերության, գլոբալ որոշումների և համաշխարհային դինամիկայի միակ աղբյուրի։

Միատարր աշխարհաքաղաքական տարածության ստեղծումն անհրաժեշտ է առաջին հերթին ամերիկյան ունիվերսալիստական քաղաքականության ճանապարհին կանգնած հնարավոր խոչընդուների հաղթահարման համար։ Այդ նպատակն իրագործելու համար կարող է կիրառվել լոկալ հարվածներ հասցելու մարտավարությունը բոլոր այն տեղերում, ուր կենտրոնացած են ԱՄՆ-ի համար վտանգ ներկայացնող և ուժի կիրառմանը դիմադրություն ցույց տալու կարողություն ունեցող աղբյուրները, ինչպես նաև այն շրջանները, որտեղ կա իրավիճակի ապակյունացման լուրջ սպառնալիք։ Սակայն, այդպիսի հար-

<sup>4</sup> Սա անդառնալի գործընթաց չէ։ Յնարավոր է, որ Աֆղանստանի և Իրաքի պատերազմներից հետո ճոճանակը թերվի հակառակ ուղղությամբ (ունիվերսալիզմից կղոլացիոնիզմ)։ Սակայն, ամեն շարժման հետ, նրա ճոճվելու ամպիտուղը կնվազի։

վածմերը պետք է լուրջ հիմնավորում ստանան, հակառակ դեպքում դրանք կարող են այլ տիպի ապակայունացման պատճառ դառնալ, ինչը և տեղի ունեցավ Իրաքի պատերազմից առաջ:

Աֆղանստանն ու Իրաքը դարձան առաջին նշանակետերը: Դրա հետ մեկտեղ, Իրաքն ընտրվել էր ուժի ցուցադրման թատերաբեմ ոչ միայն ապակայունացման կենտրոն, աշխարհաքաղաքական գործոն լինելու պատճառով, ոչ միայն այն պատճառով, որ Սադրամ Չուսեյնը Ծոցի պատերազմից հետո ընկալվում էր որպես չարի մարմնավորում (թվարկածն, ի դեպ, ամերիկացի վերլուծաբանների և քաղաքական գործիչների համար բավարար արդարացում էր՝ Չուսեյնին իշխանությունից հեռացնելու և երկիրը գրավելու համար), այլև այն պատճառով, որ հենց այստեղ էր կարելի ծանր հարված հասցնել համաշխարհային լուրջ ուժ դարձող Միացյալ Եվրոպային:

\* \* \*

Այդ տեսանկյունից մեծ հետաքրքրություն է առաջացնում իսրայելա-պաղեստինյան խնդրի լուծմանն ուղղված ամերիկյան ծրագիրը: Ամեն անգամ, երբ մերձավորարևելյան հիմնահարցի կարգավորման գործընթացին մասնակցող միջնորդները առաջարկում են կարգավորման նոր ծրագիր (1991թ.-ից այդ պարտականությունն իր վրա է վերցրել Միացյալ Նահանգները, երկրորդ միջնորդին՝ Ռուսաստանին թողնելով պասիվ դիտորդի դերը), իրավիճակը կտրուկ սրվում է: Մուսուլմանական կազմակերպությունները նոր ակցիաներ են կազմակերպում, որոնց իսրայելյան բանակը պատասխանում է ռմբակոծություններով: Երկու դեպքում էլ տուժում է խաղաղ բնակչությունը, այդ թվում՝ կանայք ու երեխաները, ինչն իր հերթին նոր բռնությունների և արյունահեղությունների պատճառ է դառնում:<sup>5</sup>

Միայն վերջին իրաքյան պատերազմի ավարտից հետո ԱՄՆ դեկա-

<sup>5</sup> Նույնը տեղի ունեցավ «ճանապարհային քարտեզ» կոչվող ծրագրի իրականացման ընթացքում: Հետագա իրադարձությունները ստիպում են գործադրություններ անցկացնել Միացյալ Նահանգների կողմից աննախանդաւ ճնշման տակ տեղի ունեցած Խրայելի վարչապետ Ժուլի Բարաքի և Պաղեստինյան ինքնավարության եեկավար Յասեր Արաֆաթի միջև 2000թ. Քենի Ղեյվիդուն անցկացված բանակցությունների հետ, որոնց ներկա էր նաև Բիլ Քլինտոնը: Այդ բանակցությունների ընթացքում Խրայելի վարչապետը ստիպված գնաց այնպիսի գիշումների, որոնք և վերջին հաշվով հանգեցրին նրա հրաժարականին: Ինչ վերաբերում է Արաֆաթին, ապա վերջինս, քաջ գիտակցելով, որ փախստականների, Երուսաղեմի կարգավիճակի և պաղեստինյան պետության ստեղծման հարցերում որևէ գիշում վերջ կտա իր քաղաքական կենսագրությանը, այնպիսի նոր պայմաններ առաջարկեց, որ բանակցություններն ընդհատվեցին: Ինքիֆադան վերսկսվեց, և հիմնահարցի խաղաղ կարգավորման հավանականությունը կրկին նվազագույնի հասցվեց:

վարությունը գտավ, որ տարածաշրջանում ստեղծվել է այն իրավիճակը, որը բույլ կտա վերսկսել բանակցային գործընթացը և վերջ տալ կես դարից ավելի առաջ սկսած ու առ այսօր շարունակվող արյունահեղությանը:

Նաշվի առնելով Միացյալ Նահանգների դերը ժամանակակից աշխարհում, այս գերտերության ներգրավվածությունը տարածաշրջանային գործընթացներում, ռազմական ներկայությունը տարածաշրջանում, լուրջ հիմքեր ունեցող հետաքրքրվածությունը արաբա-իսրայելյան հակամարտության կարգավորման մեջ և հակամարտության կողմերի վրա բոլոր հնարավոր միջոցներով ճնշում գործադրելու պատրաստակամությունը՝ իսրայելացի և պաղեստինցի դեկավարները ստիպված են հնազանդվել բանակցային գործընթացին:

Իսրայելի պնդմամբ, Միացյալ Նահանգները ստիպեց բանակցություններից հեռացնել Յասեր Արաֆաթին, որին իսրայելյան կողմը մեղադրում է ծայրահեղական խնբավորումներին հովանավորելու մեջ: Պաղեստինյան պատվիրակությունը գլխավորում էր ավելի չափավոր հայացքների տեր Վարչապետ Մահմուդ Աբբասը: Կողմերը որոշակի հանաձայնության եկան «ճանապարհային քարտեզ» ծրագրի վերաբերյալ, և դիտորդները կարծում էին, որ վերջապես գտնվեց կարգավորման ծիշտ բանաձևը: Սակայն հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ այդ տեսակետը սխալ է. կարգավորման նոր ծրագրը կարող է արժանանալ նախորդների ճակատագրին:

Ո՞րն է, ի վերջո, այս երկարատև հակամարտության կարգավորման անհաջողության պատճառը: Բանն այն է, որ բոլոր ծրագրերն ու նախագծերը, որոնք առաջ էին քաշվում այս հակամարտության կարգավորման նպատակով, հիմնված էին այն կարծիքի վրա, որ արաբա-իսրայելյան և, մասնավորապես, իսրայելա-պաղեստինյան հակամարտությունը գուտ տարածքային խնդիր է: Մինչդեռ, այս հակամարտության հիմքում ընկած է բավականին ագրեսիվ գաղափարական և կրօնա-դիցաբանական փոխադարձ անընդունելիություն, որը և, ըստ եռթյան, կազմում է ազգային ինքնագիտակցության առանցքը: Նակամարտությունը կարող է կարգավորվել միայն առանցքային արժեքաբանական կատեգորիաների համընկնան պայմաններում: Սակայն, որևէ բան չի վկայում այդպիսի իրավիճակի ստեղծման մասին:

Չի բացառվում, որ ամերիկյան ճնշման տակ, կողմերը որևէ փաստաթուղթ ստորագրեն: Յավանական է նաև, որ, խոսափելով Վաշինգտոնի զայրույթից, նրանք որոշ ժամանակ հետևեն այդ փաստաթուղթ նախատեսված պայմաններին: Եթե այդ ամենը տեղի ունենա, ամերիկացիները կտոնեն լուրջ արտաքին քաղաքական հաղթանակ, որը բույլ կտա Միացյալ Նահանգներին առաջին հերթին տարածաշրջանից

դուրս մղել Եվրոպացիներին, մասնավորապես՝ ֆրանսիացիներին, ինչից հետո հնարավորություն կստեղծվի հեռացնել Մեծ Սերծավոր Արևելքի (Միջին և Մերձավոր Արևելք + մերձկասպյան և կովկասյան ենթատարածաշրջանները) ստեղծմանը խոչընդոտող կարևորագույն արգելքը: *Սակայն, արյունահեղությունը չի դադարի և խաղաղություն չի հաստատվի, քանի դեռ չի լուծվել արժեքային համակարգերի փոխընդունելիության կարևորագույն հարցը:*

Կա ևս մի հաճամանք, որը թույլ չի տալիս խաղաղ կարգավորման նոր ծրագիրը իրագործելի համարել: Տարածաշրջանում Ամերիկայի Միացյալ Նահանգները ընկալվում է որպես Խորայելի գոյության և շահերի պաշտպան, իսկ դա նշանակում է, որ արաբական կողմը չի կարող լիովին համոզված լինել ԱՄՆ անկողմնակալության մեջ: Յրեական կողմը նույնպես լուրջ մտավախություններ ունի ԱՄՆ դերի վերաբերյալ, քանի որ գիտակցում է, որ ինքը լուրջ խոչընդոտ է վերջինիս աշխարհաքաղաքական ծրագրերի իրագործման ճանապարհին:

\* \* \*

Վերը նշված հակամարտությունների կարգավորման ընթացքում այն ապակայունացնող գործընթացները, որոնք սկսվեցին աֆղանական պատերազմով և ավելի արագ ընթացք ստացան իրաքյան պատերազմի ծավալմանք, պետք է ավելի ակտիվանան՝ սկիզբ դնելով, եթե կարելի է այդպես ասել, երկրորդ փուլին:

Երկրորդ փուլը նշանակում է տարածաշրջանի բոլոր մասերում ԱՄՆ կամ նրան դաշնակից երկրների զորամիավորումների տեղադրումը: Թե ինչպես ամերիկացիները կհասնեն դրան դժվար է ասել: Դժվար է նոյնիսկ ասել, որ դա նրանց կհաջողվի:

Այս գործընթացների վերլուծությունը էական նշանակություն ունի Հարավային Կովկասի երկրներում ապրող մարդկանց համար: Նախ և առաջ՝ մեր ենթատարածաշրջանը բարկացուցիչ մաս է կազմում բոլոր շահագրգիռ կողմերի ծրագրերում: Երկրորդ՝ մենք շատ մոտ ենք գտնվում այն երկրներին, որտեղ այսօր ռազմական գործողություններ են ընթանում, որտեղ ակտիվորեն վերադասավորվում են ուժերը և որտեղ բնական կերպով տեղի կունենա (և արդեն իսկ տեղի է ունենում) «արտաքին հակադրությունից՝ ներքին դիմադրություն» ձևափոխումը: Այդ ամենը կհանգեցնի բնակչության տարերային արտագաղթի, գենքի և թմրադեղերի առևտության ակտիվացման և այլ նմանատիպ երևույթների: Մեր ենթատարածաշրջանը կարող է կանգնել լուրջ ապակայունացման վտանգի առջև: Դրան կարելի է դիմակայել միայն Հարավային Կովկա-

սի, ինչպես նաև արժեքային և քաղաքակրթական առումով մեզ հետ սերտորեն կապված երկրների միահամուռ ուժերով։ Դրանց թվին են պատկանում, առաջին հերթին, մեր հյուսիսային հարևանները՝ ռուսական Կովկասը և հարավային հարևանները՝ Մերձավոր Արևելքը։

Յայ ժողովուրդը, իր պատմության ընթացքում ակտիվ մշակութային և քաղաքակրթական շփումներ ունենալով նշված մեծ տարածաշրջանի ժողովուրդների հետ, տարբեր ժամանակաշրջաններում ստեղծվող և տապալվող կայսրությունների մաս կազմելով, ունի ընդհանուր (թեպետև հատվածային) արժեքային համակարգ ենթատարածաշրջանների ժողովուրդների հետ։ Սկիզբանի այն մասը, որը Յայաստանի Յանրապետության ծևավորումից հետո այս կամ այն չափով կապվել է իր Յայրենիքի հետ, կրում է նաև այն ժողովուրդների արժեքները, որոնց մեջ ապրում և աշխատում է։ Այս ամենը թույլ է տալիս Յայաստանի Յանրապետությանը ակտիվ դիրքորոշվել «Սիացյալ Եվրոպա - Մեծ Միջին Արևելք» խաչմերուկում՝ իր ազգային նպատակներն ու պետական խնդիրներն իրականացնելու ճանապարհին։ Սակայն, դրա համար, անհրաժեշտ է գիտակցաբար կառուցել այնպիսի քաղաքակրթական կառույցներ, որոնցից յուրաքանչյուրն ունենա իր ուղղվածությունը դեպի դուրս և իր խնդիրը։ Յրամայական է մեր պետականության և սփյուռքի հնարավորությունների ռացիոնալ օգտագործմանը ստեղծել «բազմախողովակ ինֆորմացիոն (բառիս լայն ինաստով) համակարգ», որը հնարավորություն կտա և ստանալ, և փոխանցել այն արժեքները, առանց որոնց փոխանակման մենք դատապարտված կլինենք մտածել միմիայն գոյատևման մասին։

Յարցն այն է, որ «տարածաշրջան» հասկացության նոր ըմբռնումը, որի իմաստը ընդլայնվում է վերը շարադրված քազմապիսի կարևոր փոփոխությունների ազդեցության տակ, թույլ է տալիս հայ ազգին, որն արդեն դարավոր փորձ ունի սփռման պայմաններում ընդհանրականություն ապահովելու, ստեղծել, և մեր «Յայաստան» հիմնային արժեքի հիման վրա ծևավորել «հայություն» տարածաշրջանը։

Միաժամանակ, կովկասյան ենթատարածաշրջանում տեղի ունեցող գործընթացները պահանջում են մեզանից՝ մաս կազմել, իսկ առավել նպաստավոր պայմանների դեպքում՝ նաև աջակցել «Կովկաս» հիմնային արժեքի ծևավորմանը, նկատի ունենալով, որ այս արժեքի հիմնային դարձնելուն իր մասնակցությունը բերած համակարգերը իրենց համակարգային արժեքների դերը բարձրացնում են ընդհանուր համատեքստի մեջ։

**Աղբյուրներ և գրականություն**

1. А. Дж. Тойнби. Цивилизация перед судом истории, М., 2002, с. 383-388.
2. Jean Monnet. Memoires, Fayard, Paris, 1976. p. 297.
3. 3. Бжезинский. Великая шахматная доска, М., 1999, с. 48.

*Դեկտեմբերի 3, 2003 թ.*

## ГЛОБАЛИЗАЦИОННЫЕ ПРОЦЕССЫ И РЕГИОН: БОРЬБА ЗА ВЫЖИВАНИЕ

Давид Оганесян

### Резюме

В статье рассматриваются современные глобализационные процессы, связанные с массовым внедрением современных коммуникационных технологий, и их влияние на принципиальные изменения, происходящие в восприятии категорий времени и пространства. Рассмотрены политические глобализационные модели. Показано, что однополярная модель политического устройства современной мировой системы сопоставима с тоталитарной или авторитарной системой в доклобализационный период. Аксиологический подход к ряду проблем позволил на базе анализа системы ценностей определить, во-первых, новый подход к понятию «регион», во-вторых, попытаться проанализировать сложный путь европейских стран к созданию Европейского Союза в его сегодняшнем виде. Анализируются проблемы, связанные с сближением систем ценностей в различных конфликтных регионах.